



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ

ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՅՈՒԹՅԱՄԲ

Փամբակ համայնքի սիրելի՛ բնակիչներ, լրոեցիներ, հայոց պետականության համար այս կարևոր օրը՝ Առաջին Հանրապետության 106-րդ տարեդարձը, մենք տոնում ենք մի նոր մարտահրավերի դեմ մարտնչելով:

Երբեմնի ծաղկուն ու բարգավաճ մեր մարզն ու համայնքն այսօր վերածվել է աղետի գոտու: Սակայն առաջին անգամ չէ, որ հայը որպես փյունիկ վեր է հառնում մոխիրներից: Հենց այդպիսի մի թռիչքով էլ մարտնչող ու ազնվատոհմիկ հայը 1918 թվականին ձեռք բերեց իր ազատությունը:

Ազատության ու հավիտենական կյանքի այդ էջը բացվել է Սարդարապատում, Բաշ-Ապարանում, Ղարաքիլիսայում մղված հաղթական մարտերով, հենց այդտեղ է որոշվել հայի ճակատագիրը:

Մայր Հայրենիքի համար մղվող պայքարը շարունակվում է դարեր, մեր ազգային ինքնության ու պետականության պահպանման սրբազան սուրը շարունակում է շողշողալ յուրաքանչյուր հայի ձեռքերում:

Սիրելի՛ հայրենակցներ, մեզնից յուրաքանչյուրն ով կրում է իր մեջ հայի սրբազան արյունը, պարատավոր է գիտակցել, որ այդ արյունը պահելու համար երբեմն նրանով հայոց սարերը ներկել են պետք:

Մենք, որպես հայ ազգի արժանի շարունակություն, ծնված ենք ազատության, անկախության ու արարելու համար:

Հայոց պատմության համար այս օրն անհերքելի արժեք է. սրան պետք է մոտենալ երկյուղածորեն և ամենայն պատասխանատվությամբ:

Սիրելի՛ բնակիչներ, շնորհավորում եմ յուրաքանչյուրիդ Հայաստանի Առաջին Հանրապետության օրվա առթիվ: Գոտեպնդվե՛ք, արիացե՛ք, հավատացե՛ք ձեր բազկի ու մտքի ուժին, և ոչ մի աղետ ու ոչ մի թշնամի չի կարող սասանել ձեր խաղաղությունը:

Կեցցե՛ հայ ժողովուրդը:

Կեցցե՛ Հայաստանի Հանրապետությունը:

Հարգանքներով՝

Սուրեն Կոստանդյան

